ՆՈՐ-ԴԱՐ

№ 67 ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Հ̈ապաթ, 24 Ապրիլ 1893 Հ̈ապաթ, 24 Ապրիլ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 67

Տարեկան 10 բուբլի, վեց ամիսը՝ 6 բուբլի, երեք ամիսը՝ 3 բ. 50 կ. ամիսը՝ 1 բ., հատով՝ 5 կոպէկ։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9 ից մինչեւ 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., իսկ կրկնապատիկ

Վերայ բանասացեղծ՝

ԻԹԽԱՆ ՆԻԿՈԼԱՅ ԲԱՐԹԱՁՎԻԼՈՒ

տակիների տեղափոխումը Գանձակից Թիֆլիս տեղի կունենայ կիրակի, ապրիլի 25-ին։ Այս մասին ծանուցանում է ազգականներին և Հանգուցեալի յիշատակը յարգողներին, որոնք և Հրաւիրւում են 9½ ժամին առաւօտը նոյն օրը՝ ապրիլի 25-ին երկաթուղու «Թիֆլիս» կայարանը, որտեղից յուղարկաւորութիւնը կսկսուի դէպի Պիտաբէլի ս. Աստուածամօր եկեղեցին։

(229) 4—4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Քաղաքային ընարութիւնների առթիւ։

Քննիկոն.—Թիֆ. վոլոս. լուս. համար նոր լսատներ ընտրատուներ Խաչատուր Աբով. յիշատատակին։ Վերայ բանասացեղծ Բարաթա-Շուէյլի ս., տեղափոխման մասին։ Ռուսաց պոստ։ Բագուից։ Շուշուց Բագնից Վարդաչէնից։ Շուշուց։ Կարճուանից։ Շուշուց։ Թաղլուից։ Գեղչուից Շամշադինից։ Զիարչու Թիֆլիսում։

Հայոց Թատրոն։

Հայատանի ժողովրդական կեանքից։

Լրագրական նշանակութիւնը. — Նամակ Պարսկատանից։ Շամշադինից։— Քաղաքական լուրեր։

Հեռագրեր։

Տեղեկատու։

Յայտարարութիւններ։

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՒ

—

Մենք ընտրում ենք; միշտ և անընդհատ ընտրում ենք —այս է մեր այժմեան կեանքի ընտրող յատկութիւնը։ Մինչև օրս ընտրելով — մեր գործերը առաջ չդնացին, ի՞նչ կլինի ապագայում. այդ կրահեցնենք. առայժմ մենք չարունակում ենք ընտրել։

Այնուամենայնիւ այդ ընտրութիւնները մի նշանակութիւն կարող էին ունենալ և մեր ժողովրդի զարգացմանը նպաստել, եթէ իւրաքանչիւր ընտրող, բացի էն ուրիշ մի ուրիշ բան էլ ամփոփէը իւր մէջ. եթէ ընտրատանները իրենց ընտրողներին պարտաւոր լինէին իրենց կատարած գործերի համար ու հաշիւ տալու։ Բայց ինչ. ընտրուեան ախտով վարակուած մեր ժամանակը մարդկանց բաժանել է երկասի. մէկը որ ուզում է ընտրուել և հենց դրա մէջն է իր նպատակը, իսկ միւսը՝ որ պարտաւորւում է ընտրել, միմիայն ընտրել, այնուհետև ինչ կուզէ լինի։

Եւս ընտրեցինք, անընդհատ ընտրեցինք — կարծես թէ մի բանի հասանք. այժմ էլ Թիֆլիսն է ընտրում քաղաքային անդամներ։

Ինչ կլինէր, որ ընտրելու և ընտրուելու համար գործ դրած եռանդի հազար երրորդը մասը գործ դնէր քաղաքը բարեկարգ վիճակի մէջ դնելու համար։

Տէր-Աստուած, ինչ ասես չեն պահանջում ապագայ խորհրդի անդամից, այս պէտք է լինի նա, այն պէտք է անի նա, այս յատկութիւնը պէտք է ունենայ, մասնագէտ պէտք է լինի, եկեղեցին հրեշտակ, գաղափարական մարդ պիտի լինի. բայց... իսկապէս լինում է այն՝ ինչ որ պիտի լինի, ինչ որ անձնական հաշիւները, բարեկամական կապերը կարող են արտադրել։

Արդէն մեզ առաջադիմութիւն կը լինի, եթէ այդ բոլոր հանգամանքները ի նկատի առած, այնուամենայնիւ ապագայ քաղաքային խորհուրդը այնպիսի կազմակերպութիւն ստանայ, որ քաղաքս այժմեան ընկած վիճակից մի քայլ առաջ գնայ. գոնէ վոլոստները մաքուր լինէին և լաւ լուսաւորուած, ջուրը անպակաս լինէր և մաքուր, հաղորդակցութիւնը դիւրացած, մեռելքների վարձատուիը կանոնաւորուած, գրօսարանները բարմացրած, և քաղաքի հաշուով ապրողների թիւը պակասեցրած... այնուհետև կարելի կը լինէը աւելի մեծ բարիքների դիմել։

ՔՐՈՆԻԿՈՆ

Խաչատուր Աբովեանի մահարձանը կանգնեցնելու և նրա երկասիրութիւնները հրատարակելու համար Բագուից №-1 սորագրութեան թերթի երեսով ստացուած է։

Պ. Պ. Վահրամ Մուրադեանցից 10 բ., Արշակ Ջալեանեանցից 5 բ., Նիկոլայ Պովլովեանցից, Ս. Մալխասեանցից, Սասունի ընկերութիւնից, Ա. Բոզեանից, Բ. Յակովբեանից, Բ. Շեհեանից, Խաչատուր Կարապանեանից, Յովհան Իզմրաշեանից և Միրզայ Ամամալեանից 3-ական բուբլի։

Պ. պ. Մ. Ազարենեանից, Բէյջանեանից, Ասլան Յակովբեանից, Արտէմ Ագբաեանից, Ս. Միրզոեանից, Սիմէոն Այտենեանից, Նիկողայոս Աբրահամեանից, Յ. Քոչարեանից, Գ. Տէր-Մարգարեանից, Լևոն Տէր-Յովհաննիսեանից, Յ. Սարգսեանից, Ա. Ի. Սուլթանեանից, Ալէքսանդր Բաբաեանից, Մ. Սադրանցից, Գրիգոր Պալեանցից, Զուլում Մելիք-Հախնազարեանից, և Կ. Կ. Մելիք-Շահնազարեանից 2-ական բուբլի։

Պ. պ. Լևոն Մինասեանից, Գրիգոր Գրիգորեանից, Բաղդասարեանից, Իսահակ Հայրապետեանից, Խաչատուր Օհանջեանից, եպր. Սահակեանցից, Ն. Մանուչարեանցից, Սահակեանցից Յովհաննեանից, Տէր Գասպարեանից, Գեր. Բարխուդարեանից, Գր. Մանգասարեանից, Ն. Իզմրաշեանից, Ֆիլիպոսեանից, Լ. Խանդամիրեանից, Ա. Սարգսեանից, Գասպար Ջանդրաբեանից, Առաքել Ջաւադեանից, Պօղոս Քամալեանից, Միքայէլ Թումայեանցից Ղուկաս Աբրահամեանից, Դաւիթ Ռոստոմեանից, Ոսկի և Ս. Հովսեանից 1-ական բուբլի։

Ընդամէնն մի հարիւր (100 բ.) բուբլի։

(Սորագրութիւնը չարունակւում է)։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը նկատելով մեր փողոցների լուսաւորութեան անմխիթար վիճակը՝ մտադիր է լուսաւորութիւնը կանոնաւորելու համար ձեռք բերել «կայծակ» կոչուած լամպերից 350 հատ, որոնց ամեն մէկին արժէ 10 բ. 25 կոպ. ուրեմն այդ լամպերի վրայ քաղաքային վարչութիւնը ծախսելու է 3,587 բ. 50 կոպ. Այդ լամպերը ներկայումս ամենակատարելագործուած են համարւում և արձակում են 35 մոմի լոյս, մինչդեռ այժմեան լապտերներն արձակում են 6 մոմի լոյսով. ուստի մեր փողոցների լուսաւորութիւնը դրանցով մօտ 6 անգամ աւելանալու է։ Յաւելով պէտք է նկատենք, որ այդ լապտերները կանուեցնելու են միայն Թիֆլիսի նշանաւոր փողոցներում, իսկ քաղաքի մնաց 1820 լապտերները քաղաքային վարչութիւնը թողնելու է այդպէս մինչև որ դրանց համար ևս ձեռք կբերէ «կայծակ» լապտերներից։ Իսկ առայժմ քաղաքային վարչութիւնը մտադիր է իւրաքանչիւր լապտերի վրայ 20 կոպ. ծախսել և այժմեան ապակիները փոխել ու դրանց տեղն աւելի լաւ ապակիներ դնել ու պատրոյգը մեծացնել, որ լաւ լոյս արձակէ։

—

Վաղը, կիւրակի, ապրիլի 25-ին, ինչպէս արդէն յայտարարել ենք, երկաթուղու «Թիֆլիսի կայարանից տեղի կունենայ վերայ բանասացեղծի մարմնի մնացորդը սասր երկրից տեղափոխում են Թիֆլիս հայրենի հողի մէջ, Պիտոբէ կոչուած տեղում, Թապելու, որտեղ եկեղեցին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ԱՄԲՈՒԽ

(Վարդանի կեանքից)։

—

1. Անձրև ա վայ ա, արև ա վայ ա։
2. Վասր խոտ վատ ա, լաւն էլ անիծուած ա։ Ժող. ասո.

I.

Ս. գիւղից բարձր ծառախիտ անտառը կիսալարանափխուել, զրկուել էր իւր նախկին կանաչազարդութիւնից — ծառերը բոլորովին մերկացել էին, տունկերը չորացել, միայն սարի փեշերում՝ գաշտերին մօտիկ վայրերում այստեղ և այնտեղ նկատւում էին կենսակենա հասկեր դեղնին տուող ծառեր, բոյսեր, որոնց կանեփից Թուրացած սպարթիները հիւսխային գաժան քամին մէկ-մէկ խլում էր մայր բոյսերից և օդի մէջ խաղացնելով յուխտաւոր ցրում հեռու-հեռու կողմեր։ Ամառը վաղուց անցել գնացել էր և աշունը աուել էր իւր վերջին հրաժեշտը-բնութիւնը գառնացել էր. մարդ, անասուն և թռչուն ձմրան երեսից սարսելով տաք ապաստանարան էին փնտռում. միայն ժայռաբնակ մշտականաչ կէնիները * սօսի) բացառութիւն էին մեռնի կեանքի ընդդէմ յատկութիւնը։ Մինչև օրս ընտրելով — մեր գործերը առաջ չդնացին, ի՞նչ կլինի ապագայում. այդ կրահեցնենք. առայժմ մենք չարունակում ենք ընտրել։

Այնուամենայնիւ այդ ընտրութիւնները մի նշանակութիւն կարող էին ունենալ և մեր ժողովրդի զարգացմանը նպաստել, եթէ իւրաքանչիւր ընտրող, բացի էն ուրիշ մի ուրիշ բան էլ ամփոփէը իւր մէջ. եթէ ընտրատանները իրենց ընտրողներին պարտաւոր լինէին իրենց կատարած գործերի համար ու հաշիւ տալու։ Բայց ինչ. ընտրութեան ախտով վարակուած մեր ժամանակը մարդկանց բաժանել է երկասի. մէկը որ ուզում է ընտրուել և հենց դրա մէջն է իր նպատակը, իսկ միւսը՝ որ պարտաւորւում է ընտրել, միմիայն ընտրել, այնուհետև ինչ կուզէ լինի։

Եւս ընտրեցինք, անընդհատ ընտրեցինք — կարծես թէ մի բանի հասանք. այժմ էլ Թիֆլիսն է ընտրում քաղաքային անդամներ։

Ինչ կլինէր, որ ընտրելու և ընտրուելու համար գործ դրած եռանդի հազար երրորդը մասը գործ դնէր քաղաքը բարեկարգ վիճակի մէջ դնելու համար։

Տէր-Աստուած, ինչ ասես չեն պահանջում ապագայ խորհրդի անդամից, այս պէտք է լինի նա, այն պէտք է անի նա, այս յատկութիւնը պէտք է ունենայ, մասնագէտ պէտք է լինի, եկեղեցին հրեշտակ, գաղափարական մարդ պիտի լինի. բայց... իսկապէս լինում է այն՝ ինչ որ պիտի լինի, ինչ որ անձնական հաշիւները, բարեկամական կապերը կարող են արտադրել։

Արդէն մեզ առաջադիմութիւն կը լինի, եթէ այդ բոլոր հանգամանքները ի նկատի առած, այնուամենայնիւ ապագայ քաղաքային խորհուրդը այնպիսի կազմակերպութիւն ստանայ, որ քաղաքս այժմեան ընկած վիճակից մի քայլ առաջ գնայ. գոնէ փողոցները մաքուր լինէին և լաւ լուսաւորուած, ջուրը անպակաս լինէր և մաքուր, հաղորդակցութիւնը դիւրացած, մեռելքների վարձատուիը կանոնաւորուած, գրօսարանները բարմացրած, և քաղաքի հաշուով ապրողների թիւը պակասեցրած... այնուհետև կարելի կը լինէը աւելի մեծ բարիքների դիմել։

---

*) Ասանդութիւնը պատմում է Թէ հրէանները մի անգամ Յիսուսին բանջարով սարտաւիլի ծեծում էին, Յիսուս հարուածողներից փախաւ և Թագ կացաւ կէնի ծառերի խիտ Ճիւղերի մէջ, ուսոի կէնիներին օրհնեց, որ յաւիտեան կանաչ մնան և անուշ լուղ հոտ բերեն։

կազմում — նրանք կարծես կամ ուզում էին հակազանման անտառի հետ վիճաբանել — պարծենալ Թէ՝ իրենք մըշտադարան են և կամ կարծես գոռոզութեամբ վիշապաբար ուզում էին կռուել, մաքառել հետզհետէ ցրտացող դառնաշունչ ձմրան հետ։ Գառնապատոյ կէնիները այդպէս պես կանաչ տեսարան էին ներկայացնում մինչդեռ մեղրապատոյ անտառը, ծառատանը առանց արտասուքի, այլևայլացած, զառն կեցուով տխուր սուգի մէջ էր մտել։

Անտառը հետզհետէ ամայանում էր. բոլան քամիները սրդէն սկսել էին սաստկապէս հնչել սարերի և անտառների դէմ։ Խազան (սաղարթ) արդէն Թափուել խաշան էր զարձել և բնութեան պատահարներից զնկած կոսրտուած փետրուկների (կոճղերի) տրանքները լցուել։ Անտառի մխիթարիչ ինքներգ Թռչուններն, ինչպէս և գաշտերից սոխակը, բլբուլը... քաշուել չուել Թագ էին կացել։ Անշնորհ բուն անգամ փախել էր անտառից. միայն կռաւող գայլագուաններն էին, որ երբեմն անախորժ զա, զա, կրա, կրա... անելով Թափառելով Թրեռացնում էին սաղարթահեղ ծառերի գլխին, իսկ խազամների մէջ միայն Թըչունկներն էին մնացել, որոնք նրանց արանքները մտած՝ իրենց վոգրկի Թևերով քնջուջ էին անում կերակուր որոնում.... Ձիալին այլ ևս երկնքում որոնող աչեղ ամպ ու կայծակներ և ոչ որոտումներ... Ներքն՝ խազող գիւղից բարձրում չառաչին էր լսուում. անտառը կարծես լեռների ժայռերի սար ու ձորի հետ միասին պատերազմ մղելիս լինէր բնութեան հետ. ուր հակայական կաղնիներն անգամ սոսկում էին բնութեան հետ կայծակը կռռող վոհմոլիկից, որն անսահման զօրութեամբ ճօճում էր աջ ու ձախ, տակաւահիլ և Ճիւղախիլ էր անում մեծամեծ ծառերը և աշագին գղրդոցով վիշտ-վիշտը վայր հարուածում գետնին... Հովիւ, նախրչի, բոլորը վաղուց իջել էին ներքև, մտել գիւղին, գոմերում տեղաւորել էին իրենց հօտն ու երամակը. նրանց սրինգն ու սկուռն... այլ ևս քաղցրաձայն չէին հնչում բնութեան ծոցում — ծաղկալից վայրերում, այլ նրանց պիսը և խուլ ձայնը հազիւ էր լսւում գետնափոր օդանեւրում։ Կենդանիները նոյնպէս տրտմած էին որոճում գոմերում. նրանք էլ ազատով *) չէին բառանչում, տրտնգում ու փնտռում իրենց հագերին. կանաչ խոտը չորացել չքացել էր նրանց համար, չոր գարման էին ուտում։ Պառաւ տատը մտել էր արդէն տաք քուրսու տակ մեկնուել և կամ բրբիկ տանելը կոխել բուխարու մոխրի մէջ, նա էլ հալազում չէր և էլ չէր կարողանում հոգի ու հագի հաւելից վազել և կամ կովկիթը Ճեռքն ծատենալ կով ու գոմշի լիք-սպասկինեը բռնել, տատա կամը փշրացնել՝ ամանը լցնել... Բազմաչարչար, գիւղացին աշնանացանը վերջացրել, ձմեռուայ պաշարը տեղաւորել էր հորում, գարմանանոցում, խոտը գիպել էր

*) Սիրով, ջիգարով։

չարդախին և հազիւ կարողանում էր ազատ շունչ քաշել, բայց նա էլի գարգերը ու ցաւերը ունէր, պիտի մտածէր... Օրերից մէկը մի քիչ տաքացել էր։ Մի խումբ քեասիբ գիւղացիներ ժողովուել էին Ս. գիւղացի Թամոս ասլինի գետնափոր մարագի չէմքը, որի բերանը դէպի հեռացած արեգակն էր նայում. նրանք քաշուել էին արեգակի անդօր. — հազիւ զգալի եղող հառագայթների տակ և արեգունի արած՝ խօսում էին։

— Թամոս ապի գեղումն էլ մարդ չմնաց, որ չմորձենք, ամենքն էլ գէլ գառան մեզ կերան, մի կենդան մարդ ա մնացել, որ նրան էլ մորձենք... ապրի, գոնէ գնան նրա մօտ, մեր կռնից ասա՝ գեղն ուզում ա, որ նա մեզ քալտայ լինի...

— Ո՛վ ա, Աւագ ասէր։

— Տիրացու Սարգիսը.— պատասխանեց Աւագը, յուսալով, որ ամենքը համաձայնէք պիտի լինին իրեն։

— Օ՛ղորմի քոռ հօրը, էա ա գալել ես, մեր մաքինն էլ էր նա։

— Շատ լաւ քեռալացու ա, էլ խօսալ մնիք.— ամեն կողմից վկայեցին նրանք և Թամոս ապինին խնդրեցին որ էլ ժամանակ չկորցնի, այդ երեկոյ աշխատի անպատճառ բանը գլուխ բերի։

Թամոս ապին Թէև ադքատ, բայց գիւղում յատնի և բնատուր Ճիրք ունեցող մարդ էր ասել խօսելու մէջ։ Նա նոր էր վերադարձել Ախտաւիից և լսել էր, որ իրենց պրնատուր կիսակի օրը, ամսի 25-ին պէտք է գայ Ռ. վոս-

էչ լաւագործութիւնը կանոնաւորելու համար ձեռք բերել «կայծակ» կոչուած լամպերից 350 հատ, որոնց ամեն մէկին արժէ 10 բ. 25 կոպ. ուրեմն այդ լամպերի վրայ քաղաքային վարչութիւնը ծախսելու է 3,587 բ. 50 կոպ. Այդ լամպերը ներկայումս ամենակատարելագործուած են համարւում և արձակում են 35 մոմի լոյս, մինչդեռ այժմեան լապտերներն արձակում են 6 մոմի լոյսով. ուստի մեր փողոցների լուսաւորութիւնը դրանցով մօտ 6 անգամ աւելանալու է։ Յաւելով պէտք է նկատենք, որ այդ լապտերները կանուեցնելու են միայն Թիֆլիսի նշանաւոր փողոցներում, իսկ քաղաքի մնաց 1820 լապտերները քաղաքային վարչութիւնը թողնելու է այդպէս մինչև որ դրանց համար ևս ձեռք կբերէ «կայծակ» լապտերներից։ Իսկ առայժմ քաղաքային վարչութիւնը մտադիր է իւրաքանչիւր լապտերի վրայ 20 կոպ. ծախսել և այժմեան ապակիները փոխել ու դրանց տեղն աւելի լաւ ապակիներ դնել ու պատրոյգը մեծացնել, որ լաւ լոյս արձակէ։

—

Վաղը, կիւրակի, ապրիլի 25-ին, ինչպէս արդէն յայտարարել ենք, երկաթուղու «Թիֆլիսի կայարանից տեղի կունենայ վերայ բանասացեղծի մարմնի մնացորդը սասր երկրից տեղափոխում են Թիֆլիս հայրենի հողի մէջ, Պիտոբէ կոչուած տեղում, Թապելու, որտեղ եկեղեցին

տի կայարանը, ուր Ս. գիւղի տանուտէրի նոր ընտրութիւնն պիտի անէ. ուստի այդ բանը յայտնել էր իւր կողմի մարդկանց և շատ էր աշխատում, որ սիրացու Սարգսի քեօխվայ պատնաղը գլուխ բերի, որին ապնիւ մարդ էր ճանաչում նա։

Թամոս ապին երեկոյեան ժամանակ գնաց Սարգսի մօտ։

Տիրացու Սարգիսը եաւինջին ուսերին գցած, ոտնակախ նստած էր գիւղական սրահի տակ՝ Թախտի վրայ. նա մօտեցաւ նրան և ասաց՝

— Բարի աջողում քէ սիրացու Սարգիս։

— Ա՛յ Աստծու բարին քէ Թամոս քեօխվայ, էա որ քամին պատեց գնց մեր տան վրայ, խէր ըլի։

— Էա մի՛ ասիլ, էա։

— Բա ինչ ասեմ։

— Աման, Թամոս, էա խու քառասունհինգ տարեկան ես, խի՛ ես ուզենց սիսատակել։

— Էլ ինչ հարցնեմ, ասա տենանք — պատասխանեց Սարգիսը։

— Գնանք գոմը քսակ ցուրտ ա, կեցս չոր չկայ։

— Գնանք — ասաց Սարգիսը։ Մտան գոմը ուր անասունները գարմանը կիսել նստատել հանգիստ որոճում էին։

— Տիրացու Սարգիս ջան, դէ լսի ասեմ։

— Գիտեմն ինչ զայրի ջարըն ասես մեզ պէս քեասիբ քիստըբի գլխին ա գրած, ախ քուն ունենք, ախ գարար. էսա՝ կըն հա կըն, տանը հա տանը, պըն հա պըն, տանը հա տանը.... էնքան տարել,

Ծանր մի կորուստ ունեցավ Ղարաբաղի հայ գյուղացիությունը։ Մեր հանրածանոթ գյուղատնտես Ստեփան Ալեքսանդրի Մելիք-Ադամյանը մահացավ Շուշիում 1893 թ. հունվարի 25-ին, ապրելով ընդամենը 47 տարի։

Մելիք-Ադամյանը — Ղարաբաղի գյուղատնտեսության ամենաեռանդուն գործիչներից մեկն էր։ Նա ծնվել է Ղարաբաղի գյուղացիական ընտանիքում։ Ուսումը ստացել է Գորիսի ուսումնարանում, ապա Շուշիի ռեալական դպրոցում։ Ավարտելուց հետո նա վերադարձել է հայրենի գյուղը և զբաղվել հողագործությամբ։ Սակայն նրա հետաքրքրությունները միայն հողագործությամբ չեն սահմանափակվել։ Նա ուսումնասիրել է տեղական բուսատեսակները, հետաքրքրվել անասնապահության զարգացման հարցերով, կազմակերպել գյուղատնտեսական ցուցահանդեսներ։

Մելիք-Ադամյանի անունը լայն ճանաչում է ստացել 1887-ից հետո, երբ նա հրատարակեց «Ղարաբաղի գյուղատնտեսական ակնարկ» աշխատությունը։ Այդ գրքում հեղինակը ամփոփել էր տասնամյակների իր դիտողությունները, առաջարկել էր գյուղատնտեսության զարգացման միջոցներ։ Գիրքը մեծ հետաքրքրություն առաջացրեց ոչ միայն Ղարաբաղում, այլև Կովկասի այլ շրջաններում։

Մելիք-Ադամյանը մեծ ուշադրություն էր դարձնում ոռոգման հարցերին։ Նա կազմել էր Ղարաբաղի ոռոգման ծրագիր, որի իրականացումը կարող էր զգալիորեն բարձրացնել հողերի բերքատվությունը։ Նրա նախաձեռնությամբ Շուշիում կազմակերպվեց գյուղատնտեսական ընկերություն, որի նպատակն էր օգնել գյուղացիներին նոր մշակաբույսերի և ագրոտեխնիկական միջոցառումների ներդրման գործում։

Մելիք-Ադամյանի մահը ծանր կորուստ եղավ ոչ միայն Ղարաբաղի, այլև ամբողջ Կովկասի համար։ Նրա անունը մնաց հայ գյուղատնտեսության պատմության մեջ որպես անձնվեր գործչի, որը իր կյանքը նվիրեց հայրենի գյուղի բարգավաճմանը։

Ս. Ազարյանց։

(Իր շարունակությունը)

— Ես ինչ գիտեմ, ինչ ես ուզում, որ անեմ։ Ես ինչ կարող եմ անել, որ ես ուզում եմ

տևեց. գպրոցը նորից իր նախկին դրութեան մէջ ընկաւ. բոլորովին մոռացուեցաւ գրագարանը, այնպէս որ այս տարի այնտեղ նոր գրքեր չէ մտել. բացի Թիֆլիսում հրատարակուող բոլոր հայ թերթերից, որոնցից ամանք ձրի են. իսկ ամանք մի քանի երեսատարդներս տուած փողով. անկանոն են ընթանում և պատերը։

Գիւղն ունի մի եկեղեցի երկու քահանայով. որոնցից մէկին՝ մէկ ոտը, ինչպէս ասում են՝ գերեզմանումն է. ժողովուրդը պէտք ունի նաև մի քահանայի. Նուռտով լինելու է և տանուտէրի ընտրութիւնը, Թող լաւ հասկանան գէչլուեցիկք Թէ որքան նշանակութիւն ունի տանուտէրը Թէ գպրոցի յառաջադիմութեան և Թէ գիւղական շահերի համար։

—

Ապրիլի 23-ին չքաւորուեցաւ Ռուսիայի պետական ազգաժողովական Ճանապարհը խանգարուած լինելու պատճառով։

—

ՇԱՄՇԱԴԻՆ.—Հիմա Շամշադինում մորեխ է յայտնուել, որովհետև գարնան սկզբներում սեզական բնակիչները չկարողացան մորեխի բոլոր ձուանները հաւաքել ու ոչնչացնել։ Սրա պատճառն իսկապէս այս տարուայ երկարատև սառնակ ցրտերն ու հողի խիստ պակասութիւնն էր։

Ինչպէս միշտ, նոյնպէս և այս անգամ, մորեխի ձուանները հաւաքելու գնացողները մերկ, աղքատ գիւղացիներն էին, որոնք գոնէ կերոսկնում բաց օդեայ մենալ, իսկ շատերը տանը ուտելու հաց չունենալով գնում էին մէկ օր մի կերալ անց էին կացնում և տվիւնն պէս վերադառնում էին, իսկ հարուստները որ սովորութիւն չունէին կուսերգեան գնալու, ոչ երբէք էին գնում և ոչ էլ գնացողներին նիւթապէս օգնութիւն հասցնում։ Բացի սրանից, իւրաքանչիւր գիւղ փոխանակ այնքան մարդ ուղարկելու մորեխի ձուանները հաւաքելու, որքան անից բաղկացած է գիւղը, դրանք ուղարկում էին 10—20 մարդ կամ մի մի քան մնացեալ էին անում և խոյս տալիս գործից, շատերն էլ Թագ էին կենում, որպէս զի ազատուին այդ պարտականութիւնից, իսկ գնացողներն էլ պարապ էին անցկացնում պատճառաբանելով Թէ մորեխի ձուաններ չկան, որի հետևանքն է այսօրուայ մորեխի երևան գալը։

Մորեխի առաջն առնելու համար Թովուզ և Բերդ գիւղի բնակիչները բերել են ս. Յակոբ Մծբնայ հայրապետի ջուրը, որի հետ եկել է նաև Թէի ղուշը մորեխը կատարելու։ Տեղացիները այնքան հակացողութիւն չունեին, որ ապագայում իրենց սպասող վտանգի առաջն առնեն առանց սրա ու նրա օգնութեանը, ուստի դրանց մեկ յոյսը և ապաւէնը Թէի ղուշերն են, գոնէ այդ անելու Թուչունները մի Ճար էլ է անեն այդ Թշուառներին, որով մեծ բարիք մատուցած կը լինեն ծոյլ Թուրքերին, որոնց հանգիստն բուն է դրել մորեխը և քանի տարի է, որ չի հեռանում։ Տեղական հայ հոգևորականութիւնն էլ իւր կողմից հայը գործակալ առաջնորդութեամբ արդէն Նորչին, Թովուզ և Կըրպէն գիւղերում պատարագ է մատուցել, հանդիսաւոր կերպով Թափօր են կատարել և ժողովուրդն էլ շատ մատաղներ է մորթել։ Թափօր են կատարել և Թովուզ կայարանում և խունամ կոչուած Թուրքի հանդում։ Աղօթք անելը մատաղ մորթելը և Թափօր անելը լաւ է և բարոյապէս կապուրում ու զօրեղացնում է հայ ժողովրդին, որը պատիւ բերում դրանց և ցոյց է տալիս հայի ջերմեռանդ կրօնասիրութիւնը։ Բայց ձեռները դատ անգործ նստել և միակ յոյսը դնել Թափօրի վրայ, դա հաճելի չէ Աստուծուն, քանի որ Պօղոս առաքեալն ասում է «հաւատքն առանց գործի և գործն առանց հաւատքի մեռած է»։ Ապագայում մորեխի հասցրած վնասը ժողովրդի համար, շատ ծանր և զգալի կլինի. Թող չլինի այս տարուայ Շամշադինի հացի Թանգութիւնը։ Ով որ ականջ ունի լսելու և լսածը հասկանալու, Թող առաջուց միտքն վտանգի առաջն առնել, որքան շուտ այնքան լաւ։ Ուշացնելով մորեխի հասնելը չեն կարող գալ և օձիքը ազատել նրանից։ Սրա համար հարկաւոր է, որ Թէ հայ և Թէ Թուրք ժողովուրդը միացած ոյժերով կռուեն ընդհանուր Թշնամու—մորեխի դէմ և հայերը չասեն Թէ «մեր տեղը սար ա, մեր ինչ պարտքն ա, որ գնանք Թուրքերի համար օրներս սևացնենք և նրանց հանդերում արևի տակ Ճրնճռատալով մորեխ կոտորենք»։

Չէ որ Թուրքերը հացի պակասութեան պատճառով պիտում են գողութեան և գողանում են գիտէք ում տաւարը-նախշ՝ հայ գիւղացիներին։

Այս դէպքում էլի մեծ վնասը հայերն են կրում, որովհետև աղքատ և սոված հարևանը միշտ ցաւ է և կարող է վտանգաւոր լինել։

ՀԱՑՈՑ ԹԱՏՐՈՆ

—

Հինգշաբթի, ապրիլի 22-ին դերասան Պետրոսեանը դերասանական խմբի հետ ներկայացրեց Լերմոնտովի հռչակաւոր «Դեմոնականդէս» դրաման Ս. Ջանումեանցի Թարգմանութեամբ։

Ինչպէս յայտնի է այդ դրաման նոյն իսկ անմասնչելի է ռուսաց առաջնակարգ դրամատիկական խմբերի ուժերին և հետևապէս բնաւ զարմանալու չէ, որ հայոց դերասանական խումբը փառաւորապէս պիեսը տապալեց։ Մի կողմ Թողնելով դերերի չբաժանելը, որ արդէն մի կլասսիքական երևոյթ է հայկական բեմի վրայ և որի հետ ականայ հասարակութիւնը հաշտուել է, առանձնապէս պիտի մատնացոյց անենք այն հանգամանքը, որ դերակատարներից շատերը, բացի Պետրոսեանից, չէին հասկացել նոյն իսկ Թէ ինչպիսի պիսեր են «Դեմոնականդէս» պիեսի գործող անձինք։ Ոչ գրեստներն և ոչ դեկորացիաները համապատասխանութիւն, ի նկատի առնելով, որ պիեսում գործող անձինք 19-րդ դարու առաջին քառորդի զաւակները են։

Առաջին արարուածում Թուղթ խաղացող արիստոկրատ պարոնները աւելի յիշեցնում էին կօնչենա խաղացող վտնչներին, քան Թէ Թուղթ խաղացող աշխարհին յայտնի ներկայացուցիչներին, որոնք բուռով ակի են վրառում և սալօններում ընդունուում։

Պարով պ. Պետրոսեանին պէտք է ասենք որ բաւականին աշխատել էր «Արբենինի» տիպի վրայ և խաղը վատ չէր։

Հազար և մէկերորդ անգամ վկայում ենք որ Թատրոնը կիսով չափ դատարկ էր։

Ի դէպ մի նկատողութիւն՝ յորգելի դերասանները սովորութիւն են չինել՝ իւրաքանչիւրը իւր դերը վերջացնելուց յետոյ դուրս գալ պարտէը և բազմել առաջին կարգի բազկաթոռներում—պարոններ, այդ վերին աստիճանի անհամեստութիւն է, Թէև այդ յատկութեան հաշնդան հայերիս մէջ շատ բարձր է։

Առաջիկայ հինգշաբթի, ապրիլի 29-ին ս. Մելիքեան և պ. Արաքսեան ներկայացնելու են «Թամարա» հեղ. պ. Գ. Սունդուկեանցի։

Շ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ.

—

Չէչէ-Մամա

Սուրբ Ծարսւթեան երրորդ կանաչ կիւրակիէն, ըստ լատինաց ս. Գևորգայ առնի օրը, յիշեալ Հ. գիւղացիք պատրաստուելիւնով կընեն Չէչէ-Մամային։ Սովորաբար ամեն գարուն այն ժամանակները անձրև չի գար և երաշտութիւն կը պատճառէ, և վնաս ամեն արտորէից։ Ուստի գիւղի տասնքսան պառաւ կանայք կը հաւաքուին մէտեղ, և կընտրեն երեց մէջէն առողջ և գիմացկուն պառաւ մը, որն որ կը մերկացնեն և միայն մէտաղակ շապկով և ներքնաշորով կը Թողուն։ Ցետոյ ձեռքը մեծկակ խաչափայտ մը կուտան, որուն վրայ ճերմակ շապիկ մը կը հագցնեն, բայց սա այնչափ երկայն, պիտի ըլլայ, որ խաչափայտի վրայէն իջնէ, և գինքը բռնող Չէչէ-Մամային ալ ծածկէ մինչև ոտքի կոճերը։ Վերոյիշեալ տասն-քսան պառաւ կանայք, որոց մէկը Թմբուկ է առած ձեռքը և չորս-հինգ պառաւ ալ իւր օգնական քովէքով կանգնած, մի ուրիշ քանի պառաւ մի-երկու պարկ ունին հացի համար, մի քանին մի պարկ աղի համար, մի քանին մի պարկ ձուաբի համար և ուրիշ մէկ-երկուքն ալ մի պղնձէ աման են բռնած իւղի համար։ Իսկ անչափահաս աղայք և աղջկունք շատ շատ հաւաքուած են առնոց չուրջը հանդիսատեսութեան համար։ Վերջը մեր վեհափառ Չէչէ-Մամային իւր ձանը բանակով կը խազալ տառաջ, կը Թափառի գանէ է գուռ, և կսկսի իւր բարձր մուրացկանութեանը։ Սակայն նա ինքը բոլորովին լուռ, ինչպէս տեզացիք կ'ըսեն անխօս, պիտի մնայ։ Ըստ որում պատրաստուած Թմբկաձայն կանայք փոխանակ երեն, Թմբուկ հարկանելով երենք նորին բարձր ցանկութիւնը կը յայտնեն, լսպերբ բսելով հայերէն և Թուրքերէն, ուղղակի այն տանտիկնոջ որուն գուռը կանգներ են.

Չէչէ-Մամայն ինչ կուզէ,
Երկնքէն ամպեր կուգէ,
Չէչէ-Մամայն ինչ կուզէ,
Ասորմու (յայ). անրջև (անձրև) կուգէ....

Չէչէ-Մամայն նէ խաչը,
Ալլահտան հաղմուր խաչը,
Չէչէ Մամայն նէ խաչը,
Խաթունն-տան պուղուր խաչը....

Այսպէս շարունակելով կը հաւաքեն իւղ, ապ, հաց և ձաւար։ Իսկ այն միջոցին, այսինքն ամեն տան դրան առաջ բարձր տեղերէն մեծամեծ ամաններով պաղ ջուրը կը Թափեն խնչ Չէչէ-Մամայի գլուխն ի վայր, նա սոսկալի կերպով կը զոռայ Թաչի տակը, բայց այնու հանդերձ ամենայն քաջութեամբ կը դիմանայ հեղեղն նըման՝ մինչև իսկ փողոցը գլուխ Թափած պաղ պաղ ջրերուն։ Այս ձևով այնչափ հաց, ձաւար, իւղ և ապ կը հաւաքեն, որ հարիւր անոր գիւղի մը, ինչպէս որ ինքն է, բնակչացը մի անգամ կերակուր տալու կարողութիւնը կունենայ։ Այս ժողովարարութենէն յետոյ մեր Չէչէ-Մամային իւր դերը կատարած լինելով, կը կերպարանափոխի և իւր առաջին ձևը կառնայ ինչ որ էր արդէն։

Իսկ մեհենոյն օրերը եգիպտացը նաև կըզնէ մեծ խոյ մը, և կը տանի յանձն սուրբ Գևորգայ կանգնած փոքրիկ մատրան առաջը, որը գիւղի հարուստներն կողմը, վտակին անդին բարձը տեղմընէ. օրուն ծէջը կայ հին խաչ քարեր առանց մի գրի կամ Թուի, որը ուխտաւորի է ուրիշ անգամներ ալ Սոյն մատրան առաջը նոյն խոյը իբրև մատաղ կը մորթեն, ուր տարած են արդէն քանի մը հատ խոշոր խաղիններ (զազան), որոց մէջ կը պատրաստեն նոյն մատաղի մսովն ու ջրով փիլաւ վերահակողութեամբ երեցփոխանին և Չէչէ-Մամային։ Ապա կը հրաւիրեն քահանայն և վարժապետը, որք եկեղեցական գարգուց պատրաստութեամբ կերթան հոն. և յանուն սուրբ Գևորգայ Նախատաճակ կը կատարեն, ձէր ողորմեան կըսեն, մատաղը կ'օրհնեն, յետոյ կը նստին և մատաղը կը վայելեն. ընդհանուր գիւղացիք այնտեղ են, բացի էրկի մարդերէն և ծերունիներէն, հարսներէն և խելահաս աղջկներէն։ Նոյն մատաղէն աւելացած ձաւարը, իւղը և աղը կը ձախեն և տակը եկեղեցւոյ սրճոտակը կը ձգեն, և աւելցած հացն ալ աղքատաց տները կը զրկեն։

Իսկ գալով անձրևին, ընդհանրապէս նոյն օրէն կ'սկսի ամենատարգ երկինքը ամպոտել և անձրևը կաթկթել։ Եւ մի անգամ ալ իմ այն գիւղը ներկայութեանս նոյն հանդիսին, գեռ չի վերջացած հացկերոյթ ամենաջինջ երկինքը մթնեց, և անձրևի կեռպանաքս, անթիւ կաթիլները ողողեցին ծարաւոտ երկիրը, որուն կըսպասէին անձկանօք արեւակէզ հացաբոյսերը։

Իսկ այս եզակեան Չէչէ-Մամային ծագումը զարմանալի կուտ մթնոլորտեան մէջ ծածկուած է, այսօր ոչ մէկը ազգ մասին ամենաչնչին մի ուսանդուածին անգամ չունի, որը մի քիչ բաւականաւորիւն տար հետաքրքիրը եղոպին։ Ուստի ես ալ պարտաւորուած կը յանձնեմ դայս մեր ազգի գիտնականներուն, Թերևս մի լոյս սփռեն մեր Չէչէ-Մամային վերայ...

Հերոսէ

Կարին, 17 մարտի.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

ԻԱՇՏ, 5 ապրիլի.—Պարսկաստանում դեռ ամեն ինչ հին կարգով է ընթանում, ահա օրինակ հէնց գանագան պաշտօնեաների ընդունելութիւնները. գրանք մինչև այժմ էլ կատարւում են հին կարգով։ Որպէս նմուշ Թող ասելու չլինի այստեղ նկարագրել մեր նոր քաղաքապետի ընդունելութիւնը։

Անցեալ ամսին ժամանեց տեղս մեր նոր քաղաքապետը «Մուշիր-էլ-Սալթանէն»։ Մի երկու օր առաջ գատարանի ատիկաններները, ատիկանական տասնապետները և գահիճները՝ պատժական ձիպտաններով և փալախկաներով զինուած, պաշտօնական գոյնզգոյն զգեստներ հագած, բարձուած ձիանների վրայ նստած, ուղղի օրուեցին Նբրան դիմաւորելու։ Տեղս մեծամեծները, ռուսաց և անգլիական հիւպատոսները նրան պատուելու համար իրենց կողմից մի մի զոյգ գարգարուած ձիեր (եատաքներ) ուղարկեցին ընդ առաջ. քաղաքումս էլ բաւական մեծ պատրաստութիւն էր տեսնուել պատուով ընդունելու նրան։ Քաղաքապետի գալու օրը, պարսկ ժողովրդի մեծ մասը հաւաքուած էր քաղաքից դուրս և դատարանի առջև։ Վերջապէս քաղաքապետը մտաւ քաղաք, ուղղակի լուսնանից դատարանում, ուր նախօրօք պատրաստուած էր նրա համար մի շքեղ գարգարուած սենեակ։ Սկսուեց Թնդանօթաձգութիւնը մօտ ¼ ժամ, Հետևեալ օրուանից սկսած մինչ 10 օր մեծամածները գնացին այցելութեան, ամեն մէկը իւր կարողութեան համեմատ ընծաներով (փիշքաշներով). Նրան տանում էին՝ մէկը 100 պարսկական ոսկի, միսը կանխիկ փող չուենալով՝ մի քանի լաւ մետաքս, երրորդը՝ արծաթեայ ամաններ, չորրորդը՝ քաղցրեղէններ, և այսպիսով իւրաքանչիւր ոք, որ կամենում է ներկայանալ և ծանօթանալ քաղաքապետին, անչրաժեշտ ընծան էլ պէտք է հետն ունենայ՝ ըստ պարսկական սովորութեան։

Տեղիս պարսկահպատակ հայերը ունէին մի նախնական սովորութիւն, որ նոր քաղաքապետ գալու ժամանակ խմբովին ընդառաջում էին քաղաքից մի կամ երկու վերստ հեռաւորութեամբ իրենց հետ առնելով մի մատաղացու, որը քաղաքապետի ոտքի տակ էին զոհում։ Վերջինս մեծ սիրով էր վերաբերւում դէպի խումբը և գոհունակութիւն էր յայտնում, բայց այս տարի այդ սովորութիւնը մոռացութեան տրուեց։

Նախկին ժամանակներում պարսիկների մէջ սովորութիւն էր (և այժմ էլ դեռ շարունակւում է այդ սովորութիւնը), որ քաղաքապետը փոդոց դուրս գալու ժամանակ, մօտ հարիւրապատիկ ոտիկաններ (փարաշներ) և շամիրներ երկու կողմից շարքով ընթանում են, շարունակ բղաւելով «բռո բրնե» (գնացէք) «փաշօ,սատր-փա-փաշօ» (ոտքի եղէք) չնայած որ փողոցում ոչ ոք էլ չկայ այդ միևնոյնն է՝ սովորական ադմուկները չեն Թողնում։

—Արդէն պարսից ռամադան ամիսն է, առաւտուրը բոլորովին քնած է, պարսիկները այդ ամսում գիշերը փոխում են ցերեկուան, բոլոր գործերը դադարած են, գիշերը արթուն են մինչև լուսաբաց, իսկ ցերեկը քնած են մինչև երեկոյեան մօտերքը։ Մարը գատարան՝ ոչ ոք չկայ, որ գատիդ հանէ. մարը փոստատուն՝ ոչ ոք չկայ գարձեալ. մարը հեռագրատուն նոյն տեսարանն է քո առաջդ՝—կամ փակ կըգտնես և կամ ծառայողն չոքած աչքերը լափած բերանը միգապ բաց արած։ Մի խօսքով այդ ամսում Թէ առևտրական և Թէ գատական գործերը շատ համրաթալ են ընթանում։

—Տեղիս հայ հասարակութիւնը մի գովելի յատկութիւն ունի՝ որ սուրբ Ծարսւթեան կամ Ծննդեան տօները անց է կացնում ի մեսին հայ եկեղեցւոյ բակում խմբովին, մասնակցելով ընդհանրական սեղանին, որը պատրաստում է ժողովրդի նուէրով։ Այդ «մատաղի» անունով է հաւաքում, և ծախսից աւելացածը յատկացնում է ուսումնարանին։ Այս ընդհանրական սեղանին մասնակցում է ռուսաց հիւպատոսը, եԹէ ոչ անձամբ, գէթ իւր կողմից բաժին ուղարկելով։

—Մեծ. ս. Էլիանագեանն, այն իւր ից սկսած, երբ ծովի ձկնավաճառութեան կատարը իւր ձեռքումն ունի, ամեն Ծննդեան և Զատկի տօներին հրամայած է ուղարկելու բաւականաչափ ձուկ և խաւիար, Թէ ընդհանրութեան սեղանի համար և Թէ հասարակութեանը բաժանելու։ Մինչև վերջին տարիները այդ ընծան կանոնաւորապէս մատակարարւում էր հասարակութեան, որովհետև ուղարկում էր եկեղեցու բակը։ Բայց մի քանի տարի է վեր է, որ նոյնը ուղարկւում է մի ինչ որ պարոնի անուամբ և այդ վերջինի կարգադրութիւնները դժգոհութիւնների տեղիք է տալիս։ Ասում են, որ սեպհականացնում է նուէրների մեծ մասը իրեն և իւր բարեկամներին, իսկ աղքատներին կամ չնչին բաժին տալով և կամ բոլորովին չտալով։ Ուստի մեծ ուսումնջի տեղիք է տալիս ժողովրդին, Լաւ կըլինէր, որ այսուհետև այդ նուէրը ուղարկուէր եկեղեցու բակը, ըստ նախկին սովորութեան, որով Թէ դժգոհութիւն տեղիք չէր տըրուել և Թէ նուէրը կը ծառայէր իւր նպատակին։

Սուս.

—

ՇԱՄՇԱԴԻՆ, 15 ապրիլի.—Մեր գիւղական ուսուցիչների գրութիւնը շատ վատ է գլխաւորապէս հէնց նրա համար, որ նրանք գտնւում են անգործացած մարդկանց շրջանում։ Սակայն շատերն իրենց գրութիւնը կրկնապատիկ վատ գոյներով են նկարագրում։ Ի՞նչ է դրանց նպատակը. արդեօք յու-

սահատեցնել այդ մեհեձին պաշտօնի մէջ մտնել ցանկացող երիտասարդ անձնաւորութիւններին թէ իրենց անչեղոքութիւնը երևան հանել։

Մենք զարմանում ենք, թէ ինչու՞ են գանգատւում, որ գիւղական աշակերտի հայրը ամբողջ տարին ոտք չէ դնում ուսումնարան։ Եւ իսկապէս ինչու՞ չպէտք է նա գէթ ամիսը մի անգամ մտնի ուսումնարան, եթէ միայն նա հետաքրքրւում է ուսումնարանով, այսինքն՝ եթէ ուսումնարանը նրա մէջ հետաքրքրութիւն է զարթեցրել։ Իսկ եթէ այդ հետաքրքրութիւնը չկայ, ապա դա ուսուցչի թերութիւնից չէ առաջանում։ Մեր կարծիքով ամեն մի ուսուցիչ կարող է ժողովրդին ուսումնարանի հետ կապել, ամեն մի ծնողի պարտաւորացնել ամիսը մի անգամ այցելել ուսումնարան և լսել դասերը։

Պէտք է իմանալ գիւղացուն հրապուրելու ձևը, միջոցը։ Եթէ ուզի, գիւղական ուսուցիչը կարող է գէթ ամիսը մի անգամ ժողովել երեխաների ծնողներին (կողմնակի անձինք էլ կարող են գալ) և տալ նրանց զանազան տեղեկութիւններ, պատմել հետաքրքիր պատմութիւններ, կարդալ, սովորեցնել անհատական գիտելիքներ, քաջալերել աշխատութիւնը և պարապարակել ծուլութիւնը, որ ընդարձակ բոյն է դրած գիւղերում. երբեմն, երեխանցը երբեմն տալ օրին շատ մեծ սերով լուսում է գիւղացին և վերջապէս ծանօթացնել նրանց Քրիստոսի կեանքի հետ, օրը փափագում է լսել ամեն մէկը։ Այս կարող է անել ուսուցիչը ձմեռուայ պարապութեան ժամանակ աւելի. և հարկ է երբ նա իրեն նուիրել է ոչ թէ առհիկի այլ գիւղացու լուսաւորութեանը։

Սկզբներում գուցէ գործը վատ ինչ դանգաղ լինի, բայց բաւական է խրատութեամբ, պատուէրով թէ կանոններով կապել գիւղացուն ուսումնարանի հետ, ապա հասկացնել՝ սիրել տալ նրան լոյսը, ուսումն և նորութիւնը, ապա արդէն ամեն բան կարգով ինքն իրեն կգայ։ Ապա կարելի է հեռացնել նրանից նախապաշարմունքը, բայց զգոյշ լինելով այդ գաղերով կապմուած չինքը կործանելիս փլատակների տակ չընկնելու համար։

Պէտք է աշխատել գրաւել նրանց սէրն ու համակրանքը, իսկ գրա համար հարկաւոր է փոքր ինչ խոնարհութիւն, պէտք է կարողանալ գիւղացի դառնալ, սիրով և քաղցր վարուել ամենի հետ։ Այս բոլորը կատարելու ժամանակ մի վարպետութիւն ևս հարկաւոր աչքի առաջ ունենալ, այն է՝ երես չտալ գիւղացիներին և սխալանքից հեռու լինել՝ նրանց լեզուները երկարելու տեղիք չտալու համար։

Գիւղական ո՛ւսուցչը նշանակուած է այդ խաւար ամբոխը լուսաւորելու նրա յաւերին գործան տանելու, նրա սխալներն ուղղելու և ոչ իւր յաւերը ու իւր անպզտութիւնները նրանց գանգատելու։ Այդպիսի գանգատներին պէտք է վերջ տալ. ոչ ոք չէ կարող մեր տեղ գործել և ոչ ոք էլ պարտաւոր չէ, ամենքն իրենց տեղն ու գործն ունին։

Ս. Ա.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

— Իտալական լրագրերը խօսելով արքայական զոյգի արձամէկ պահի ատնախմբութեան մասին, մեծ ուշադրութիւն են գործնում Վիւկէմ կայսրի Նիցկայութեան վրայ, նրա մէջ եւսպեական դաշնակցութեան ամրութեան գրաւականը տեսնելով։ Միմիայն «Secolo» լրագիրն է, որ հեռատես աչքով է նայում այդ այցելութեան վրայ, պնդելով, որ իտալիան անտեսական վատ դրութեան մէջն է և թէ եւսպեական դաշնակցութիւնը նրա վրայ շատ ծանր բեռն է պնում, երկրի նիւթական միջոցները միայն զինուորական պատրաստութիւնների վրայ ծախսելով։

— Անգլիայի և Աւզանստանի էմիր՝ Արդուրահման-խանի միջև յարաբերութիւնը գնալով աւելի վատանում է։ «Memorial Diplomatique» Թերթի ասելով. «Միջին Ասիայում պատրաստւում են Աւզանստանի էմիրն աւազանալով հաւաքել իւր մօտ իւր բոլոր զօրապետներին և իմամներին Քաբուլ մեծ խորհուրդ։ Երկրի աւանդութեան համեմատ խորհուրդում արած որոշումները խիստ գաղտնի են պահւում։ Ենթադրւում են, որ այդ մեծ խորհուրդը մի նախապատրաստական միջոցառում է աւելի ընդարձակ միջոցների, որոնց էմիրը մըտադիր է գործ դնելու սահմանների վրայ։

— Գերմանիայում յայտնի Ֆաբերկանա էրհարդը մի նոր արագաձիգ Թնդանօթ է հնարել, որը մինչև օրս գինուորական ամբաձգութեան արհեստին վերաբերեալ յայտնի Թնդանօթներից ամենակատարելագործուածն է համարւում։ Այս մասին խիստ շատ են խօսում արտասահմանի Թերթերը և ինչպէս ասում են, յայտնի Կրուպը 3 միլիոն մարկ է առաջարկել այդ գիւտն ձեռք բերելու համար. բայց էրհարդը մտադիր է Թնդանօթները չնեղու համար նոր գործարան բանալու և մըտադիր չէ իւր գիւտը ծախելու։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ Ա.Բ-ԻՆ»

ՀԻ ԻՍԻՍԱՑՒՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԲԵՐԼԻՆ, 22 ապրիլ։—Փիշերը, տեղս ժամանելուն պէս, կայսրը այցելեց կայսերական կանցլերին, որը այսօր առաւօտը Նորին Մեծութեան գործերի մասին տեղեկացրեց։ Երեկոյեան Կասըրվիլի մօտ պարզաճենատական Հաշ է լինելու, ուր հրաւիրուած են մինիստրները, մինիստրութեան պաշտօնեաները և բարեստագի մի քանի անդամներ։ Սովորականից դուրս՝ Հաշի համար հրաւիրագիրը ուղարկուեցան այսօր առաւօտը միայն։ Զինուորական օրինագծի համար քուէարկութիւնը հաւանական է որ տեղի ունենայ վաղը։ Նրան ընդունելու պատմաճեները այսօր նոյնքան անորոշ են, ինչպէս որ երէկ էին։ Լաւում է, որ կայսրը գրաֆ Կասըրվիլի առաջարկութեան համեմատ համաձայնութիւն է յայտնել, որ բարեստագը արձակուի եթէ գինուորական օրինագիծը մերժուելու լինի։

ԼՈՆԴՈՆ.—Անգլիական բանկը զեղջումը բարձրացրել է $2^1/_2$-ից $3^0/_0$-ի։

ՎԵՆՆԱ. — Այստեղի քաղաքական շրջաններում խիստ անհանգիստ են գերմանական գինուորական օրինագծի ստորագրուելի վիճակի մասին. երկիւղ են կրում, որ այդ օրինագիծը անաջողութեան պատահելով Բերլինի կառավարութիւնը կամ կաշխատէ ըստիպել, որ Աւստրիան աւելացնէ իւր պատերազմական ոյժերը կամ կբռնուէ առանձին—բարեկամական յարաբերութիւն հաստատել Ռուսիայի հետ, որ իսկոյն նկատելի կլինի արեւելեան խնդրում։

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍԱՆԴՈՒԽՏ ՍԱՆԴՈՒԽՏԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիսից Բաքու դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Թիֆլիս հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Պօստային գնացքը Թիֆլիսից Բաքու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 20 րոպէ։

Պօստային գնացքը Թիֆլիսից Բաքում հասնում է երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաքուից հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաքուից Թիֆլիս դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 45 ր. և Թիֆլիս հասնում է երեկոյեան ժ. 9-ին 52 ր.։

Պօստային գնացքը Բաքուից Թիֆլիս գնում է գիշերուայ ժ. 11-ին 25 ր. և Թիֆլիս է գալիս ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Պօստային գնացքը Բաքուից Թիֆլիս դուրս է գալս գիշերուայ ժ. 11-ին 10 ր. և Թիֆլիս հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐԿԵՐ
ՄԱԶԻ ՀԱՄԱՐ
Վ. ԳԷՆԻ
ՎԵՆՆԱՅՈՒՄ

Տնտիպ պատրաստած, Անվնաս դեղը են մազն ու մօրուքը կարճ միջոցում սև, չկ և բաց ու մուգ շագանակագոյն ներկելու համար։ Մի սրուակի գինը Ճանապարհի ծախսով 3 րուբլի է։

Ռուսիայի համար գլխաւոր պահեստն է՝

Վ. ԱՈՒՐԻԽ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
Կալտիջնայա 18.

(Մ.) 6—2

ԹԷՅԻ ԽԱՆՈՒԹ
ՎՈՂԱՒԱՒԻ ԵԻ ԸՆԿ.
(Դիմորցովի փողոց, Սառաֆևի տուն)
միշտ պատրաստի գտնւում է
ԿԵՌՈՒԾ ՊԱՏՐԱՍՏԻ ԹԷՅ

№1	3	ր.	»	կ.
2	2	ր.	70	կ.
3	2	ր.	40	կ.
4	2	ր.	20	կ.
5	2	ր.	»	»
6	1	ր.	80	կ.
7	1	ր.	60	կ.
8	1	ր.	40	կ.

Ֆունտն ար. Ժէ փաթեթի Ներով. արժէք Դեռը Հասել են Ոչխրեն.

ԹԻԹԵՂԵԱՅ ԱՐԿՂԻԿՆԵՐԻ ՄԷՋ ԹԷՅ.

№3	2	ր.	50	կ.	1 ֆ.	1ֆ. արկ.
3	2	ր.	60	»	» »	$^1/_2$ »
4	2	ր.	20	»	» »	$^1/_2$ »
42		ր.	30	»	» »	$^1/_3$ »
4		ր.	40	»	» »	$^1/_4$ »

ՍՏԱՅՈՒԱԾ Է ԹԻԹԵՂԵԱՅ ՇՔԵՂ ԱՐԿՂԻԿՆԵՐՈՎ ԹԷՅ
որ կոպէկ ուզի

№1	3	ր.	—կ	ֆ.	1 ֆ.	արկ.
»1	3	ր.	20	»	$^1/_2$ »	»

Բացի սրանից կայ ապխոի չհաւ ԼԷչ 1 ր. 15 կ. ֆունտը։

ԱՂԻՍԻ ԿԱՄ ԿԱԼՄՈՒԽԻ ԹԷՅ
1 ր. ֆունտը.

ԱՄԵՆԱԼԱՒ ՏԵՍԱԿԻ ԿՕՖԻ

Մոկկայի	80	կ.	1	ֆ.
Մարտինիկի	65	կ.	1	ֆ.

(212) 10 9.

ԲԺՇԿԱՊԵՏ ՔՈՒՉԱՐԵԱՆՑ
ընդունելութիւնը ցերեկուայ ժամը 8-ից մինչև 12-ը և երեկոյեան ժամը 6-ից մինչև 8-ը, վիներական-կաշուի և ականջի հիւանդութիւնների համար։
Սոլոլակ, Սապովայա փ., սեփ. տուն։
ՆՈՅՆ ՏԵՂՈՒՄ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՎԱՆՆԱՆԵՐ
(Քալանթէ) շքեղ և առողջապահօրէն կահաւորուած։ 50—48

ԼՈՋԻ ՏԵՂԻ
և
վաճառւում է բացառապէս Կեդրոնական գրավաճառանոցում
ԻՍ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑԻ
ՀԱՅՐՑ ԳԻՐՔ
Բաղկացած 400 երեսից, և 8 վիմատիպ նկարներով. պատրաստած է Սահակ-Մեսրոպեան մրցանակով։ Գինն է 1 ո. 50 կ., գումարով զնողներին 15% զեղչ։
(Խմբ.) 30—30

Վաճառ. և Իներէթի վիճակային Կոնտոր. Հրամանի Համաձայն առաջիկայ Հ-բուհի ապրիլի 25-ին, առաւօտեան ժամը 11-ին ս. պատարագից յետոյ սիրտ կոտորած Հաւատարմի Էջմիածնեցւոյ ԱՐՄԻԱԾՆԵՑԻՈՑ Ս. ԳԻՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՅ ՆՈՐ ԵՐԵՑՓՈՒՄՆԻ և ՀԱՇՈՒԱՏԵՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ, ուստի հրատիրում եմ նոյն եկեղեցւոյ-ծխական ժողովուրդին շնորհ բերել նշանակեալ օրը Էջմիածնեցւոյ եկեղեցւոյ-ծխական դպրոցի գոյքը մատնակցելու ընտրութեան։ Վերատեսչ բարեկարգութեան եկեղեցւոյ Հայոց Հաւատարմի Աշոտ քահանայ Թէմուրազեանց։
(322) 2—2

Իմ աշխատութիւններս մեծ մասամբ սպառուած են. մնացեալները հետևեալներն են, որ այսուհետև կարելի է ստանալ միայն ինձանից.

ՀԱՅԻ ԽՈՒՐԻՐ	— 80 կ.
ՇԱՀԷՆ	1 ր.
ՅԵՅԵՐ	1 ր.
ԲԶՊԻ	1—20 կ.
ՍԿԻԶՐՆ ԵՐԿԱՆՑ	1—20 կ.
Փոստի ծախք իւրաքանչիւր գրքին	10 կ.

Մեծ քանակութեամբ առնողներին 30% զեղչ կըլինի։

Վերջին աշխատութիւնս նոր լոյս տեսաւ տպարանից և շուտով կուղարկուի պ. պ. բաժանորդներին, ուստի խնդրեմ այն յարգոյ պարոններին, որոնց մօտ կան բաժանորդագրութիւններ շատպեն վերադարձնել։

Հասցէ՝ Թիֆլիս, Ներսիսեան դպրանոց. Тифлисъ Армянская Семинарія.

Պետ Պաւշեանց.
(Խ.) 20—16

(Մ.) 52—14

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՓՐՈՆԱԿԱՆ
ԴԷՊՕ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ
Մոսկուայում Աւդրուխի Թատրոնի և Աւդրեսկրեան ընկերութեան,

ՌՈՅԱԼՆԵՐ ԵՒ ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

Պետերբուրգի գործարաններից
Կ. Մ. ՇՐԵԴԵՐԻ—արքունի գործարան, ԵՂԲ. ԴԻՊԵՐԻԽԻ և ՍՄԻԹ ՎԵՊԵՆՆԵՐԻ։

Ինչպէս լիշեալ գործարանների միակ գործակալ Կովկասում, Թիֆլիսում, ես իմ երաժշտական դեպոյում ունիմ մեծ քանակութեամբ ռոյալներ և պրիանոներ։

Զուռնաներ, ալտներ, վիոլոնչելներ, կոնտրբասներ, ֆլեյտաներ, ֆագոտներ, լարեր, տաբէ և երաժշտական գործիների բոլոր պարագաները առաջարկում եմ մեծ քանակութեամբ։ Գները գործարանային։ Վաճառում եմ հատով և մեծ քանակով։ Գները կարելի է վճարել մաս առ մաս։ Օտարերկրացիների պահանջները կատարւում են անմիջապէս։ Գնած իրերն ընդունւում են ուղարկելու որոնողորտային ընկերութիւնների սակաղնով։

Հասցէն՝ Дворцовая ул. д. Тиф. Двор. Зем. Банка, музыкальное депо Б. Мириманяна
(317) 25—23

Дозволено цензурою. Тифлисъ 23-го апрѣля 1893 г. Տպարան «Կաւկազ»-ի Типографія „Кавказъ" Гол. пр. домъ Читахова.